Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 631 - Ա որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր
«ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՔԱՂՑԿԵՂ ԵՎ ԱՐՅԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ»

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է անհատույց կերպով աջակցել քաղցկեղ և արյան հիվանդություններ ունեցող, ՀՀ-ում բուժվող մինչև 25 տարեկան ֆիզիկական անձանց:
2.	Ծրագիրը բարեգործական որակելու նպատակը	Բարեգործական որակման նպատակն է օգտվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկային արտոնություններից:
3.	Բարեգործը	«Սիթի օֆ սմայլ բարեգործական» հիմնադրամ
4.	Ծրագիրը կատարողը	Սույն ծրագիրն իրականացվում է Սիթի օֆ Սմայլ բարեգործական հիմնադրամի կողմից Հասցե՝ ք. Երևան, Ներսիսյան 7 Հեռ:՝ 00 374 91 403 927 00 374 10 283 800 e-mail: info@cityofsmile.org ՀՎՀՀ՝ 00464744
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հիմնադրամի գործունեության հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Ներսիսյան 7 Բնագավառը՝ առողջապահական
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի բյուջեն կազմում է 133,400,000 դրամ:
7.	Բարեգործություն ստացողը	Ծրագրի շահառուներն են քաղցկեղ և արյան հիվանդություններ ունեցող մինչև 25 տարեկան ՀՀ-ում բուժվող ֆիզիկական անձինք, որոնք «Սիթի օֆ Սմայլ» բարեգործական հիմնադրամի շահառուներ են, այդ թվում՝ սակավ ապահովված ընտանիքներ, որոնք չեն կարող ինքնուրույն ապահովել իրենց բուժման ծախսերը:

8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ներկայացված ծրագիրն ընդգրկում է 15.07.2021 թ. մինչև 31.12.2022 թ.
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրում ներկայացված հաշվարկներն ընդգրկում են 15.07.2021 թ. մինչև 31.12.2022 թ. ընկած ժամանակահատվածը: Նախատեսվում է իրականացնել դեղորայքային աջակցության միջոցառումներ քաղցկեղ և արյան հիվանդություններ ունեցող, ՀՀ-ում բուժվող մինչև 25 տարեկան ֆիզիկական անձանց: Տվյալ ծրագիրն իրականացնելու համար նախատեսվում ծախսել 128,000,000 դրամ դեղորայքի և 5,400,000 դրամ ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերի համար:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Հիմնադրամը ՀՀ տարածքում 15.07.2021-31.12.2022 թթ. ընկած ժամանակահատվածում նախատեսում է ձեռք բերել դեղորայք 128,000,000 դրամ արժողությամբ և անհատույց բաշխել շահառուներին:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Հիմնադրամը ՀՀ տարածքում 15.07.2021-31.12.2022 թթ. ընկած ժամանակահատվածում նախատեսում է ձեռք բերել հաշվապահական հաշվառման ծառայություն 5,400,000 ՀՀ դրամ արժողությամբ:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Սիթի օֆ սմայլ բարեգործական հիմնադրամը համագործակցում է ՀՀ ԱՆ «Պրոֆ. Ռ. Օ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» ՓԲԸ-ի և ՀՀ առողջապահության նախարարության հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Սույն ծրագրի գործունակության և արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է Սիթի օֆ սմայլ բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից: Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետի համաձայն սահմանված տեղեկությունների ներկայացում լիազորված մարմնին: Հիմնադրամն անցնում է տարեկան ֆինանսական աուդիտ, որի արդյունքները հրապարակվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

		Յուրաքանչյուր եռամսյակ հիմնադրամի կայքում հրապարակվում է հիմնադրամի ծախսերի մանրամասն հաշվետվություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Տ. ԱՎԻՆՅԱՆ

28.07.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ